ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

2019թ. սեպտեմբերի 2-ի թիվ 1 նիստի

Ք.Երևան

Նիստին ներկա էին «ՀՖԿՍՊԻ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 24 անդամներից 24-ը (կից ներկայացվում է Խորհրդի անդամների գրանցաթերթիկը):

Նիստը վարում էր Խորհրդի տարիքով ավագ անդամ պրոֆեսոր Ռ.Դ.Շառոյանը:

Նա առաջարկեց հաստատել օրակարգի հարցերը:

Ելույթ ունեցան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (ՀՀ ԿԳՄՍ) նախարարի խորհրդական Գ.Մամիկոնյանը: Նա առաջարկեց 1. Ինստիտուտի՝ ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի N 771-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 4-րդ կետը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Ինստիտուտի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:»:

2. Ինստիտուտի՝ ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի N 771-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 57-րդ կետը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«57. Ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, ով ունի գիտական աստիճան և գիտական կոչում: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում:»:

Առաջարկությունը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝

կողմ՝ 24

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

Որոշեցին հաստատել ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի օրակարգը:

1.«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:
2.«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն:
3.«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին»:
4.«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանի դիմումի համաձայն լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
5. .«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի ընտրություն:

Պրոֆեսոր Ռ.Դ.Շառոյանը խնդրեց խոսքը փոխանցել հոգաբարձուների խորհրդի նախկին նախագահ Ա.Լ.Ջուլֆալակյանին:

Ա.Ջուլֆալակյանը ողջունեց նիստի ներկաներին, հայտնեց իր հրաժարականի մասին: Շնորհակալության խոսք ուղղեց խորհրդին կարճատև, համատեղ աշխատանքի համար և մաղթեց բազում հաջողություններ ինստիտուտի հետագա գործունեության մեջ:

1.ԼՍԵՑԻՆ՝ ՀՖԿՍՊԻ խորհրդի նախագահի ընտրության մասին:

Պրոֆեսոր Ռ.Դ.Շառոյանը առաջարկեց հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրել Հայաստանի ըմբշամարտի առաջնությունների մրցանակակիր Ռոման Մուրադյանին, հաշվի առնելով նրա սպորտային նվաճումները և աշխատանքային գործունեությունը:

Այլ թեկնածուներ չառաջադրվեցին:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝

կողմ՝ 23

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ՀՖԿՍՊԻ հոգաբարձուների խորհրդի նախագահ ընտրել Հայաստանի ըմբշամարտի առաջնությունների մրցանակակիր Ռոման Մուրադյանին:

Ռ. Մուրադյանը շնորհակալական խոսք հայտնեց վստահության համար:

2.ԼՍԵՑԻՆ՝ խորհրդի նախագահ Հայաստանի ըմբշամարտի առաջնությունների մրցանակակիր Ռ.Մուրադյանին:

Նա առաջարկեց խորհրդի քարտուղար ընտրել Ա. Գյոզալյանին:

Խորհրդի անդամ Գ.Մամիկոնյանը առաջարկեց քարտուղարի պաշտոնում թեկնածու ընտրել ուսանողության կողմից ընտրված անդամներից:

Առաջադրվեց ՀՖԿՍՊԻ ՖԴԱՏ ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Դ.Ալեքսանյանի թեկնածությունը:

Քվեարկության դրվեց Դ.Ալեքսանյանի թեկնածությունը քարտուղարի պաշտոնում ընտրվելու համար:

Քվեարկության արդյունքները՝

կողմ՝ 23

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ՀՖԿՍՊԻ հիմնադրամի քարտուղար ընդունել ՖԴԱՏ ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի Դ.Ալեքսանյանին:

3.ԼՍԵՑԻՆ՝ ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին:

Հոգաբարձուների խորհրդի անդամ ՀՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական Գ.Մամիկոնյանը առաջարկեց՝

1. Ինստիտուտի՝ ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի N 771-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 4-րդ կետը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Ինստիտուտի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:»:

2. Ինստիտուտի՝ ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի N 771-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 57-րդ կետը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«57. Ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, ով ունի գիտական աստիճան և գիտական կոչում: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում:»:

Առաջարկությունը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝

կողմ՝ 24

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի N 771-Ն որոշմամբ հաստատված ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի կանոնադրության 4-րդ կետը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Ինստիտուտի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:»:

2. ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի N 771-Ն որոշմամբ հաստատված ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«57. Ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, ով ունի գիտական աստիճան և գիտական կոչում: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում:»:

4.ԼՍԵՑԻՆ՝ ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ռ.Մուրադյանը ներկայացրեց ինստիտուտի ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանի լիազորությունները դադարեցնելու մասին դիմումը (դիմումը կցվում է).

Ռ.Մուրադյանը առաջարկեց պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանի՝ ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի ռեկտորի, լիազորությունների դադարեցման մասին դիմումի հարցը դնել քվեարկության:

Քվեարկության արդյունքներ՝

կողմ՝ 16

դեմ՝ 7

ձեռնպահ՝ 1

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի ռեկտոր Վ.Բ.Առաքելյանի լիազորությունների դադարեցումը:

Ինստիտուտի անձնակազմի կողմից շնորհակալական խոսքով հանդես եկավ սպորտային մենեջմենթի և հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Ա.Գ.Հարությունյանը: Նա նշեց նախկին Ռեկտոր Վ.Բ.Առաքելյանի 20 տարվա բեղմնավոր աշխատանքը:

Խորհրդի անդամ ՀՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական Գ.Մամիկոնյանը շնորհակալության խոսք հայտնեց Վ.Բ.Առաքելյանին համատեղ աժխատանքի համար և մաղթեց նրան առողջություն:

5.ԼՍԵՑԻՆ՝ ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի ընտրության մասին հարցը:

Ելույթ ունեցան՝

Պրոֆեսոր, ինստիտուտի լրագրության ամբիոնի վարիչ Ռ.Շառոյանը, որն առաջարկեց ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար ընտրել պրոֆեսոր Դավիթ Խիթարյանին:

Հոգաբարձուների խորհրդի անդամ, «Հայաստանի ցատկացանցի ազգային ֆեդերացիա» ՀԿ նախագահ, Գինեսի ռեկորդակիր Դ.Ֆահրադյանը նույնպես առաջարկեց պրոֆեսոր Դ.Խիթարյանի թեկնածությունը՝ հաշվի առնելով վերջինիս անցած սպորտային, ինչպես նաև մանկավարժական ուղին և հեղինակությունը մարզաշխարհում:

Ելույթ ունեցավ պրոֆեսոր Դ.Ս.Խիթարյանը:

Նա շնորհակալություն հայտնեց վստահության համար: Նա վստահեցրեց ներկաներին, որ գործունեությունը ուղղված կլինի ուսումնական գործընթացի բարելավմանը և որակի բարձրացմանը, իսկ իր ծրագիրը կներկայացնի հիմնական ընտրությունների ժամանակ:

Խորհրդի անդամ Դ.Ալեքսանյանը նշեց , որ ուսանողությունը նույնպես կողմ է Դ. Խիթարյանի թեկնածությանը և ակնկալում են , որ իրենց հույսերը կարդարացվեն:

Խորհրդի անդամ Է.Ավանեսովի կողմից տրվեցին մի շարք հարցեր կապված հետագա աշխատանքների հետ, մասնավորապես նա անդրադարձավ կրթական ծրագրերին, հաստիքացուցակի վերանայմանը, ԲՈՒՀ-ի միջազգայնացմանը, աշխատակիցների շահերի բախման հարցերին, դասախոսների պարտավորվածության մակարդակին, նրանց վրա ճնշում գործադրելու, ոչ արդար գնահատման համակարգի վերաբերյալ և այլն:

Պրոֆեսոր Դավիթ Խիթարյանին ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար ընտրելու հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝

կողմ՝ 24

դեմ՝ 0

ձեռնպահ՝ 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար ընտրել պրոֆեսոր Դավիթ Խիթարյանին:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ **Ռ.Մուրադյան**

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝ **Դ.Ալեքսանյան**